

ԿՈՅՐ ՊԱՐԺԵՎՈՒԹԵԱՏ

ԽԱՀԱԴՐՄԱՆ ԱՐԱՐԱԿ ԱՋԱՍԴՐՄԱՅ.

Խաւ է կոյր աչօք քան կոյր մոտօք, կ'ասէ Եղիշէ մեր քաջ պատմագիլը, Եւ կարի քաջ. վասն զի մարդկային միտքը երբ քաջ մշակուած լինի, ոչինչ մարմնական թերութիւնք կարող չն նորա յառաջադիմութեան հսկայաբալ ընթացից խոչընդակ լինել՝ թէ բարոյական և թէ նիւթական առարկայից մասին։ Ասացի մարմնական թերութիւնք, Այսո՞ թէպէս և մարմինը իւր գեղեցկութիւնը կիսանգարէ եթէ անգամներից մէկը պակասի, որը կուղէ. սակայն հինգ զբայութեանց՝ տեսանելիքի, հոտոտելիքի, լսելիքի, ճաշակելիքի և շօշափելիքի պակասութիւնքը՝ ոչ թէ միայն զեղեցկութիւնը, այլ և անհատի հոգեկան զբացումը արտաքին կաղափարներից անգամ կ'ըրկէ։

Քայց խորին շնորհակալութիւն Արարջին բնութեան, որ թէ բնական կորովամուռթեամբ և թէ ի հարկէ գործածութեամբ, մէկի պակասութիւնը միւսով կլինէ։

Խնչպէս մեր կոյր վարժապետը, մեր համագիւղացի արգէն ի նոր Պարագիլիսայ գաղթեալ Կարապետ Մարտիրոսեան քառասնամեայ մէկը, որ զեռ 6—7 տարեկան տղայ ով զիտէ ինչ պատճառից կուրացած՝ ամեննեին արտաքին զաղափարներին անծանօթ, միայն յաւանդութենէ յարակցաց Հայ զրոց զաղափարներին տեղեակ, այնու ամենացնիւ իւր հոգեց վառվլուն եռանդով ի մանկութենէ անտի մոտաց նախանձելի անդաստանը անզր քան զչափին մշակել է ինչպէս պիտի պատմեմք իրրե ականատես և անաչռ վկայ։

Սա ի մանկութեան անդ սկսաւ առաքինութեանց զրեմէ բոլոր տեսանելիքը բովանդակել, խոչեմութիւն, արիութիւն, ժուժկալութիւն, առատաձնութիւն, բնազգօրէն թուարանութիւն ելն, ևլն. յորոց 1—2 սը իրրե շօշափելի օրինակ ընդարձակօրէն պատմեմք։

Թէ որ զիւղու Պատարագ չմատչուէր, սա ի հասարակել զիշերոյն մենաւոր կոյր ի կուրացն կ'կանիւէր յԱղքբանդրապոլ քաղաք, համարեա

տասն վերստ տեղ, ի տես սրբոյ Պատարագի, և ի ըստ քաջգրաշունչ երգոց նորաւ Յօրէ անտի ունակացուցել է համարեան բոլոր ժամասացութեանց երգեր, և գործ կածէ գողտրիկ եղանակաւ։ ուր որ պատահի, նաև տեսնելով որ այդու ևս չէ կարող իւր անյագ բաղձանքը զսպել, սկսաւ ինքն ինքեան զանազան մրգեղինաց կորիզներից շօշափելի զրեր կազմել, և իւրաքանչիւրոց վերայ տառերի անուանքը յատկացնել. զորս տրամադրեալ ի վերայ թելից, որքան կարելի է համառ օտակի, ըստ պահանջման տեղւոյն, զարմանալի իմն արագութեամբ ի ձեռն շօշափիման ձեռաց կ'կարդայ ինչ որ լինի. կարծես սա այն կոյրն էր, զրոմէ հարցրին Քրիստոսի Փրկչին մերոյ՝ թէ ԱՌՈՅ վեաս է, սորա՞ թէ հօր և մօր իւրոյ՝ զի կոյր ծնցին, և անդէն պատասխանին. ԱՌ' զորա վեաս է, և ոչ հօր և մօր իւրոյ, այլ՝ զի յայտնի լիցին զործքն Աստուծոյ ի դժան, վերջապէս շատ մակղիբներ կ'պատկանէր դորան. բայց զուցէ ձանձրցմ բերէ ընթերցողաց. ուստի համառ օտենք բանը նպատակից չէ եռանալու համար։

Այժմ՝ տեղական գործակալի առաջարկութեամբ, իւր իրձիթում համադրացեաց քսանի չափ աղքատիկ մանկափե հաւաքած՝ յաջողակ իմն ձեռվ կվարժեցնէ անվարձ, որպէս զի՝ վայրենի աղիսարեր որթերից հասունացած խաղող կմել տալ, և մտաւորական կուրութեան դաշտում խարիստող մատաղերամ որերաց համար լուսաւոր վայր պատրաստել, մէկ խօսքով, մարդկութեան մարդիկ տալ։

Գորանով թէւ ատելութեան և մախանաց ենթարկուած է խղճալին, բայց ոչ ինչն. յուսով եմք որ նոցա նախանձարեկութեան նէտերը՝ կամ իւրեանց կապարձից մէջ պիտի փախն, և կամ դուրս արձակողները նորա անդամանդեայ համբերութեան գէմ զծել անգամ չկարողանան. Այր հարցի ընդ վէմն այս, փշրեսցի, և ոյր վերայ անկցի, հսկացէ զնամ,։

Արդ՝ թէպէտե սորս գործունէութիւնը Եւրոպական ազգերին բաղդաստելով՝ որոց կոյրելն անգամ ուսման յաղթանակն առել են, իրքւ ոչ ինչ է. սակայն մէր ազգի արդեան վիճակին նկատելով, մանաւանդ զիւղականաց, որք զեռ աղին

ուութեան օրօրոցում կ'իորթան, մի յերկնից վեր եկած հրաշք պէտք է ճանաչուի:

Աւստի՝ յուսով եմք, որ Խմբապրութիւնդ չ' զլանալ մի զայսպիսի ազգօգուտիրողութիւն հրատարակել միջոցաւ պատուական Արքուու ամառադրոյդ ի յորդոր թմբելոց, և ուրախութեան առիթ չետաքըբիր ուսումնասիրաց:

Վանա-էլ քահանայ Աստուածատրւանց.

Ի 42 ԳԵՂԻՌԵ ՀԵՂԻՌԵ 1870 ամ

Ի ՇԵՐՄԻ Գ. ՅԱՆ - + ԷՒԼԻՄՈՅ ՔԵՂԻՌԵ

ԴՊՐՈՑ ԹՈՒՄԲՈՒԼ ԳԵՂԻՌԵ.

Խ. Խաժրու-Ռէան Արարտա Ահաժրոյ.

Մեք աւելորդ չամարեցինք մեր թումբուլ զիւղի ծիսական Դպրոցի զրութիւնն զրաւոր յայսնել մեր սիրելի ազգայնոց Արարտատի միջոցաւ: Անցեալ 1868 ամի մեր զիւղի սուրբ Յովհաննէս եկեղեցւոց սրահի մէջ զտանվում էր երկու հատ եկեղեցւոց սեպհական անյարմար զրութեամբ սենեակներ: որոնք պատրաստեցան Ուսումնարան գիւղական մանկուսաց ուսանելու: Փոքր միջոցի շարունակութեամբ, աշակերտաց յառաջադիմութիւնն բաւականին օգուտ ցոյց տալով, զգացին Մեծայարդոյ (Երբեմ) այցելուք Դպրոցին, շնորհք և բարեխոշարար ջանիւք և անխոնջ աշխատութեամբ Ուսուցին առանց ոռօճի թէ Հայ և թէ Ռուս լեզուաց: Արդէն իսկ մեծայցյա ենք, որոնք իրենց հաւանութիւնը տեսածին պէս թէ զրաւոր և թէ բանաւոր ճշութեամբ հալորդած լինին մեր հասարակաց Ա. Ե. Համբառ: Հօրն, որ և Նա իր ազգի առաջադիմութիւնը ցանկալով միշտ հոգոյ ուրախութեամբ լսել և տեսնել, մինչ անգամ ժրաշան աշխատողացն շինայելով իր Հայրապետական պարզեի պատկն և օրհնութեան Կոնդակն, անցեալ 1869 ամի համարաւ 97, օրհնեց կոնդակաւ աշխատութիւնն մեր ուսուցչի (Սիմէօն քահանայի Տէր Ստեփաննոսեանց), որը մինչ ցայժմ այն օրից կը գայ շարունակութեան իւր պաշտօնն: Թէպէտ ուսման քաղցր ճաշակն չվայելողաց համար գժուար և անտանելի էր կարելորութիւնն հո-

գալու . . . , բայց երբ մեր հասարակութիւնն տեսնելով իրենց զաւակաց կրմութիւնը և համեստութիւնը քիչ ինչ բարւորուած, դոհ սրառվ շատ ուրախութիւն զգացին, չինսայելով իրենց զրամաւոր նպաստը յօգուտ ինորոյ շինութիւն զարոցին. որպիսի զրաման ստանալուց ևորը զրեցաւ ի մուտքապենեալ Տումարի շնորհած հոգաբարձուացն ի Հոգեոր իշխանութիւնէ: Անցեալ 1869 ամին տեսնելով անշարժմար դրութիւնն շինուածօցն՝ նորուց կառուցաւ երկու յարմարաւոր սենեակներ, որոց թիրութիւնն արդէն տարցոյ մէջ աւարտուած տեսանի հանդերձ միջի նստարաններով՝ զրասեղաններով և այլն բոլոր հարկաւորութեամբ վերաբերեալ Դպրոցի: Արդէն իսկ ժողվուած մօտ 35 հատ աշակերտօք առաջնոյն պէս շարունակ ուսանումն նոյն քահանայի աշխատութեամբը: Այժմ պարտ կհամարինք մեղ վերայ՝ նուիրատուաց անունը՝ տուբերուլ և աշխատողաց բարեհոգութեան շնորհն հալորդել Զեղ և բարեմիտ աղայնոց՝ ի յորդոր և ի իրախուսանս այլոց հանդերձ արարեալ ծախուց ցուցակաւ, յուսալով այսուհետեւ ևս առաւել բարեկարգութեան և յառաջադիմութեան մէջ մտնի մեր փոքրիկ Դպրոցն հասարակաց համակրութեամբ և օգնականութեամբը, որոնց զաւակաց համար է ամենին աշխատութիւնը:

Անտօն Ա. առ Քահանայ Դէլ Արեգանեանց.

ԴԵՂԻ. 1870 ամ:

Ի Գ. ԹԱՎԻՔԻՆ-Լ:

ՅԵՐԵՒ ՆԵՐԻ ԴՐԱՄ Տ ՆԵՐԱԿ ՀԻՆԿ-ՌԵԱՆ ՃԵՐԵԿ-ՆԵՐԻ ԴՐԱՄ Տ ՄԵՐԵՐԵՐԻ ԹԱՎԻՔԻՆ-Լ:

Ա. Հ. Հ. Հ.

- | | | |
|-----|--|-----------------------------------|
| Հմբ | 1 (Տեսուչ Դպրոցին) Տէր Անտօն Աւագ քահ. Տէր Ստեփաննոսեանց | 30 |
| | 2 (Դպրոցի և եկեղեցւոց գանձապետ) | |
| | Անդրէաս Յովանափեան | 14 45 ¹ / ₂ |
| | 3 (Ուսուցչ Դպրոցին) Ա. Ք. Տէր Ստեփաննոսեանց | 4 50 |
| | 4 Կալուածատէր գիւղ. Հետուար Խանն | |